ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀԱՊՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/5»

ք. Երևան «13» 08 2018 թ.

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը ի դեմս ռեկտոր Ռ.Զ.Մարուխյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Էկոմիքս» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Սասուն Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **10** օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **419580 (չորս հարյուր տասնինը հազար հինգ հարյուր ութսուն)** ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների (Չափաբաժին 2՝ ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ, Չափաբաժին 3՝ ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ, Չափաբաժին 4՝ ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ, Չափաբաժին 5՝ ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ, Չափաբաժին 6՝ եռակցման էլեկտրական սարքեր) համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365** օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է **5** /հինգ/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի **N 1, N 2, N 3 և N 3.1** հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ	«Էկոմիքս» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105	Հասցեն՝ Ք. Երևան Ա. Բաբաջանյան 60/2
Բանկը՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Գյումրի մասնաճյուղ	Բանկը՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1150001469160100	Հ/Հ՝ 2052822070211001
ՀՎՀՀ՝ 01504054	ՀՎՀՀ՝ 01255701
Ռեկտոր՝ Ռ.Հ.Մարուխյան _____ /ստորագրություն/ Կ.Տ	Տնօրեն Ս. Գասպարյան _____ /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված
«13» 08 2018թ. կնքված
«ՀԱՊՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողի անվանումը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
2	42651200	ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ WORTEX	SKIPFIRE. LIMITED Չինաստան	Ձեռքի էլեկտրական հարվածող գայլիկոնիչ (ударная дрель) Սնուցումը՝ ցանցից-220Վ-230Վ Հաճախականությունը՝ 50Գц, Հզորությունը՝ 900Вт, Պարապ ընթացքի(холостого хода)պտույտների քանակը՝ 0-3000об/мин, Հարվածների հաճախականությունը՝ 0-43200уд/мин, Գայլիկոնման (сверления) առավելագույն տրամագիծը՝ աղյուս--13մմ, փայտ--30մմ, մետաղ-- 13մմ. Բռնիչի(патрон) տեսակը՝ բանալիով. Հակառակ պտտման (реверс) և պտույտների հաճախականության էլեկտրոնային կարգավորման հնարավորությամբ: Հանդիսանում է հիմնական	հատ	33000	33000	1,00	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց-2	1,00	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

				միջոց (երաշխիքային ժամկետ՝ ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր)WORTEX DS1609							
3	42651200	ձեռքի էլեկտրամեխ անիկական գործիքներ WORTEX	SKIPFIRE. LIMITED Չինաստան	Անկյան տակ կտրող էլեկտրական սղոց (торцевая пила) Սնուցումը՝ ցանցից-220В-230В. Հզորությունը՝ 1500Вт. Արագությունների քանակը՝ 1.Կտրման բարձրությունը՝ 55մմ. Կտրման լայնությունը՝ 120մմ. Սկավառակի տրամագիծը՝ 210մմ, Թեքման անկյունը՝ 45^0. Շրջադարձի անկյունը՝ 45^0. Պտույտների քանակը՝ 5000об/мин, Քաշը՝ 6,7կգ Հանդիսանում է հիմնական միջոց (երաշխիքային ժամկետ՝ ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր): WORTEX MS2116L	հատ	68496	68496	1,00	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց 2	1,00	Պայմանա գիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
4	42651200	ձեռքի էլեկտրամեխ անիկական գործիքներ WORTEX	SKIPFIRE. LIMITED Չինաստան	Պերֆորատոր (перфоратор): Սնուցումը՝ ցանցից-220В-230В Հզորությունը՝ 900Вт Հարվածի առավելագույն ուժը՝ 2.8Дж. Հարվածի ուժը՝ 2.8Дж. Հորատմամբ գայլիկոնման առավելագույնտրամագիծը՝ բետոն—24մմ. Քաշը՝ 3,1կգ. Աշխատանքի 3 ռեժիմով՝	հատ	57996	57996	1,00	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց-2	1,00	Պայմանա գիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

				գայլիկոնում, գայլիկոնում հարվածով, փորում (долбление). Անվտանգության մուֆտի առկայություն. Ռեդուկտորի (редуктор) պատյանը՝ ալյումինե համաձուլվածքից. Կոմպլեկտավորում՝ կողային բռնակ, հորատման խորության արգելափակիչ, հորատիչներ 3հատ(6,8,10մմ). Հանդիսանում է հիմնական միջոց (երաշխիքային ժամկետ՝ ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365** օրացուցային օր): WORTEX RH2427X							
5	42651200	ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ WORTEX	SKIPFIRE. LIMITED Չինաստան	Ջեռքիէլեկտրոմեխանիկական հարթիչ-կտրիճ (болгарка): Սնուցումը՝ ցանցից-220В-230В Հաճախականությունը՝ 50Гц Պահանջվող նոմինալ հզորությունը՝ 1250Вт. Սկավառակի տրամագիծը՝ 125մմ.Պարապ ընթացքի (холостого хода) պտույտների հաճախականությունը՝ 12000 об/мин, Անջատիչը՝ ֆիկսացումով. Շպինդելի պարուրակի երկարությունը՝ 14մմ. Շպինդելի պարուրակի տրամագիծը՝ M14մմ: Հանդիսանում է հիմնական միջոց (երաշխիքային ժամկետ՝ ապրանքն ընդունվելու օրվան	հատ	29996	29996	1,00	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց-2	1,00	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

				հաջորդող օրվանից հաշված **365** օրացուցային օր): WORTEX AG1213E							
6	42661400	եռակցման էլեկտրական սարքեր РЕСАНТА САИ 250	ТЕК ТЕХНИК УНД ЭНТВИНКЛУНГ Շվեցարիա	Եռակցման (զոդման) էլեկտրական սարք: Գերտաքացումից պաշտպանության հնարավորությամբ, հովացումը պարտադիր 200մ3/ժամ արտադրողականության բարձր հուսալիության արդյունաբերական հովացուցիչով(вентилятор): Լարումը մուտքում՝ 140-260В, Պարապ ընթացքի(холостого хода) լարումը՝ 85В, (Напряжение дуги)30В Եռակցման (զոդման) հոսանքը՝ 10-250А Հզորությունը՝ 6.60 кВт , Սնուցման ֆազերի քանակը՝ 1 Ելքային հոսանքի տեսակը՝ հաստատուն. Մաքսիմում եռակցման հոսանքը անընդհատ աշխատանքի դեպքում՝ 250А. Նախատեսված 1.6մմ-ից մինչև 6.0մմ տրամագծով էլեկտրոդներով զոդման համար, Լրացուցիչ հատկանիշներ՝ -հակակպչունություն (Антиприлипание)՝ կա - տաք ստարտ (Горячий старт)՝ կա - դուգաի ֆորսաժ (Форсаж дуги)՝ կա Քաշը 5 կգ.. Հանդիսանում է հիմնական միջոց (երաշխիքային	հատ	129996	129996	1,00	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց-2	1,00	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

				ժամկետ՝ ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365** օրացուցային օր): PECAHTA CAИ 250							
7	42671180	BOSCH ձեռքի գործիքների մասեր	BOSCH Շվեցարիա	Շեղբեր: Լոբզիկի սղոց, T101D- 8հատ, T101BR- 8հատ, T119BO- 4հատ: ԲՈՇ	հատ	396	7920	20,00	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց 2	20,00	Պայմանա գիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
8	44192700	STARTUL ներկագլանիկ, ներկարարա կան աշխատանքն երի համար	SKIPFIRE. LIMITED Չինաստան	Ներկագլանիկ: Ներկարարական աշխատանքների համար, փայտե կամ պլաստմասսայե պոչով, արհեստական մազերից պատրաստված, խավի երկարությունը 8-ից մինչև 25 մմ, պատրաստված միասեռ նյութից, խավի հավասար բարձրությամբ, հոլովակի երկարությունը՝ 25սմ ոչ պակաս	հատ	2196	17568	8,00	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց 2	8,00	Պայմանա գիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
9	44511120	STARTUL գոգաթիակնե ր	SKIPFIRE. LIMITED ՌԴ	Թիակ ձյան. Մետաղական, երկուսից ոչ պակաս ամրության փոսորակներով, լայնությունը 340մմ-ից ոչ պակաս, բարձրությունը 340մմ-ից ոչ պակաս,ամրացման խողովակաձև մասի երկարությունը 80մմ-ց ոչ պակաս, 140սմ-ց ոչ պակաս փայտե պոչով	հատ	3500	17500	5,00	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց 2	5,00	Պայմանա գիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

10	44511220	STARTUL տարատեսակ ձեռքի գործիքներ	SKIPFIRE. LIMITED Չինաստան	Մածիկաթիակ: 5 սմ լայնությամբ, չժանգոտվող պողպատից, փայտյա կամ պլաստմասե պոչով	հատ	346	692	2,00	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց 2	2,00	Պայմանա գիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
11	44511220	STARTUL տարատեսակ ձեռքի գործիքներ	SKIPFIRE. LIMITED Չինաստան	Մածիկաթիակ: 10-15 սմ լայնությամբ, չժանգոտվող պողպատից, փայտյա կամ պլաստմասե պոչով	հատ	446	892	2,00	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց	2,00	Պայմանա գիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
12	44511220	STARTUL տարատեսակ ձեռքի գործիքներ	SKIPFIRE. LIMITED Չինաստան	Վրձին լատեքսի: Մեծ ,ներկարարական աշխատանքներ կատարելուհամար,ողղանկյուն (50 x 150մմ), փայտե բռնակով, բնական երկար մազերով:	հատ	1700	5100	3,00	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց 2	3,00	Պայմանա գիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
13	44511220	STARTUL տարատեսակ ձեռքի գործիքներ	SKIPFIRE. LIMITED Չինաստան	Վրձին / տափակ / : Ներկարարական աշխատանքներ կատարելու համար, փայտե բռնակով , բնական մազերով ներկող մասի երկարությունը 10սմ ոչ պակաս, լայնությունը 10սմ(4"), STARTUL	հատ	2696	8088	3,00	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց 2	3,00	Պայմանա գիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
14	44511220	STARTUL տարատեսակ ձեռքի գործիքներ	SKIPFIRE. LIMITED Չինաստան	Վրձին / տափակ / : Ներկարարական աշխատանքներ կատարելու համար, փայտե բռնակով , բնական մազերով ներկող մասի երկարությունը 10սմ ոչ պակաս, լայնությունը 7,5սմ, 3", STARTUL	հատ	1896	7584	4,00	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց 2	4,00	Պայմանա գիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

15	44511220	STARTUL տարատեսակ ձեռքի գործիքներ	SKIPFIRE. LIMITED Չինաստան	Վրձին / տափակ /: Ներկարարական աշխատանքներ կատարելու համար, փայտե բռնակով , բնական մազերով ներկող մասի երկարությունը 8,5սմ ոչ պակաս, լայնությունը 6սմ, STARTUL	հատ	996	3984	4,00	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց 2	4,00	Պայմանա գիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
16	44511240	VOLAT աքցաններ	SKIPFIRE. LIMITED Չինաստան	Հարթաշուրթ: Բռնակների երկարությունը 115մմ-ից ոչ պակաս, VOLAT:	հատ	1496	1496	1,00	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց 2	1,00	Պայմանա գիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
17	44511240	VOLAT աքցաններ	SKIPFIRE. LIMITED Չինաստան	Կծաքցան / кусачка /: Բռնակների երկարությունը 115մմ-ից ոչ պակաս, VOLAT	հատ	1796	3592	2,00	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց 2	2,00	Պայմանա գիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
18	44511340	СИБРТЕХ գայլիկոնի սայրեր	СИБРТЕХ ՌԴ	Պոբեդիտե", Φ 6 մմ: Ռուսական արտադրության	հատ	346	3460	10,00	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց 2	10,00	Պայմանա գիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
19	44511340	СИБРТЕХ գայլիկոնի սայրեր	СИБРТЕХ ՌԴ	Պոբեդիտե", Φ 8 մմ: Ռուսական արտադրության	հատ	446	4460	10,00	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց 2	10,00	Պայմանա գիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

20	44511340	СИБРТЕХ գայլիկոնի սայրեր	СИБРТЕХ ՌԴ	Պոբեդիտե", Փ 10 մմ: Ռուսական արտադրության	հատ	496	4960	10,00	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց 2	10,00	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
21	44511340	СИБРТЕХ գայլիկոնի սայրեր	СИБРТЕХ ՌԴ	Պոբեդիտե", Փ 12 մմ: Երկարությունը՝ 60սմ Ռուսական արտադրության	հատ	2450	4900	2,00	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց 2	2,00	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
22	44511340	СИБРТЕХ գայլիկոնի սայրեր	СИБРТЕХ ՌԴ	Պոբեդիտե", Փ 18 մմ: Երկարությունը՝ 60սմ Ռուսական արտադրության	հատ	3950	7900	2,00	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց 2	2,00	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
		ընդամենը					419580				

*Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ	«Էկոմիքս» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105	Հասցեն՝ Ք. Երևան Ա. Բաբաջանյան 60/2
Բանկը՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Գյումրի մասնաճյուղ	Բանկը՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1150001469160100	Հ/Հ՝ 2052822070211001
ՀՎՀՀ՝ 01504054	ՀՎՀՀ՝ 01255701
Ռեկտոր՝ Գ.Հ. Մարտիրոսյան ____________ /ստորագրություն/ Կ.Տ.	Տնօրեն Ս. Գասպարյան ____________ /ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված N 2
«18» 08 2018թ. կնքված
«ՀԱՊՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում					
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	42651200	ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ	33000	33000	33000	33000	33000	33000
3	42651200	ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ	68496	68496	68496	68496	68496	68496
4	42651200	ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ	57996	57996	57996	57996	57996	57996
5	42651200	ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ	29996	29996	29996	29996	29996	29996
6	42661400	եռակցման էլեկտրական սարքեր	129996	129996	129996	129996	129996	129996
7	42671180	ձեռքի գործիքների մասեր	7920	7920	7920	7920	7920	7920
8	44192700	ներկագլանիկ, ներկարարա կան աշխատանքների համար	17568	17568	17568	17568	17568	17568
9	44511120	գոգաթիակներ	17500	17500	17500	17500	17500	17500
10	44511220	տարատեսակ ձեռքի գործիքներ	692	692	692	692	692	692
11	44511220	տարատեսակ ձեռքի գործիքներ	892	892	892	892	892	892
12	44511220	տարատեսակ ձեռքի գործիքներ	5100	5100	5100	5100	5100	5100

13	44511220	տարատեսակ ձեռքի գործիքներ	8088	8088	8088	8088	8088	8088
14	44511220	տարատեսակ ձեռքի գործիքներ	7584	7584	7584	7584	7584	7584
15	44511220	տարատեսակ ձեռքի գործիքներ	3984	3984	3984	3984	3984	3984
16	44511240	աքցաններ	1496	1496	1496	1496	1496	1496
17	44511240	աքցաններ	3592	3592	3592	3592	3592	3592
18	44511340	գայլիկոնի սայրեր	3460	3460	3460	3460	3460	3460
19	44511340	գայլիկոնի սայրեր	4460	4460	4460	4460	4460	4460
20	44511340	գայլիկոնի սայրեր	4960	4960	4960	4960	4960	4960
21	44511340	գայլիկոնի սայրեր	4900	4900	4900	4900	4900	4900
22	44511340	գայլիկոնի սայրեր	7900	7900	7900	7900	7900	7900

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան»
հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Գյումրի մասնաճյուղ
Հ/Հ՝ 1150001469160100
ՀՎՀՀ՝ 01504054

Ռեկտոր՝ Ռ.Հ.Մարությյան _____
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Էկոմիքս» ՍՊԸ

Հասցեն՝ Ք. Երևան Ա. Բաբաջանյան 60/2
Բանկը՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 2052822070211001
ՀՎՀՀ՝ 01255701

Տնօրեն Ս. Գասպարյան _____
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
2018 թ. կնքված
«13» 03
«ՀԱՊՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ **ՀԱՊՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/5**

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«13» 08 2018թ. կնքված
«ՀԱՊՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N *ՀԱՊՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/5*
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն